Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2011թ. փետրվարի 9-ին կայացած թիվ 5 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2010-11 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման խնդիրները:
3. Դասախոսների որակավորման դասընթացների նոր համակարգի /կրեդիտային/ անցկացման հարցը:
4. Սոց. հարցումների արդյունքների քննարկում:
5. Դեկանատի կողմից գիտելիքների գնահատման վիճակը ստուգող հանձնաժողովի տեղեկատվությունը:
6. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի առիթով ելույթ ունեցավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ հիմնականում գոհացուցիչ են քննության արդյունքները, միջին վիճակագրությունը գրեթե նույնն է, չեն նկատվել արտառոց երևույթներ: Զեկուցողը ամբիոնի վարիչների ուշադրությունը հրավիրեց մի փաստի վրա, այն է՝ որոշ քննաթերթիկների վրա բացակայել են նրանց ստորագրությունն ու ֆակուլտետի կնիքը: Հանձնարարվեց, որ այսուհետ ամբիոնի վարիչները ավելի ուշադիր լինեն հիշյալ բացթողման համար:

Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման խնդիրների առիթով ելույթ ունեցավ մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Հարությունյանը: Վերջինս հատկապես մատնանշեց պրակտիկայի ընթացքում նկատվող մի արատավոր երևույթ՝ պրակտիկայի ղեկավար դասախոսները ոչ միշտ են, եթե չասենք՝ ընդհանրապես, բարեխիղճ ներկա լինում հանրակրթական դպրոցներում կազմակերպվող պրակտիկային, չեն կազմակերպում դասալսումներ ու քննարկումներ: Հարցի առիթով ֆակուլտետի դեկան Ավագյանը խիստ ցուցում տվեց բոլոր ամբիոնների վարիչներին և ասաց, որ այսուհետ ինքն անձամբ է հետևելու պրակտիկայի անցկացմանը:

Դասախոսների որակավորման դասընթացների նոր համակարգի /կրեդիտային/ անցկացման հարցի առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ավագյանը և նկատեց, որ այսուհետ սպասվում են էական փոփոխություններ. առայժմ ճշտվում են

դասախոսների տարիքային սահմանափակումները: Զեկուցողը խոստացավ խորհրդի առաջիկա նիստերից մեկում, երբ արդեն ռեկտորատը հաստատած կլինի վերջնական փոփոխությունները, լրացուցիչ տեղեկություններ հաղորդի խորհրդի անդամներին:

Այնուհետև տեղի ունեցավ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի սոցհարցումների արդյունքների քննարկում: Ֆակուլտետի դեկանը մեկ առ մեկ ներկայացրեց 4 միավորից ցածր միավոր հավաքած դասախոսների անունները: Ցավով նշեց, որ սոցհարցումներում ցածր նիշերը հավաքում են հիմնականում նույն մարդիկ /Գ. Մանուկյան, Ծ. Հարությունյան, Գ. Հանանյան և այլք/: Խորհրդի նախագահը նկատեց, որ, ճիշտ է, սոցհարցումները ինչ-որ տեղ ենթադրում են սուբյեկտիվություն, բայց և այնպես հիմնականում ճիշտ են արտացոլում տվյալ դասախոսի գիտելիքների, գիտամանակավարժական ու բարոյական որակը և կեցվածքը: Նա դարձյալ ամբիոնի վարիչներից պահանջեց և հանձնարարեց իրենց առաջիկա նիստերի ընթացքում լայնորեն քննարկել այդ խնդիրը, կարդալ անանուն հղումները և կատարել համապատասխան եզրակացությունները և այլն:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետից անվանական կրթաթոշակի ներկայացվողների ցուցակը /կից ներկայացվում են քաղվածքները/:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ